

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

**ՆՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՆԱՅՐԵ-
ՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱ-
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ԵՎ 4-ՐԴ ՆՈԴՎԱԾՆԵՐԻ, ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆ-
ՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի ԹԻՎ 207-Ն
ՈՐՈՇՄԱՆ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 հունիսի 2011թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի,
Ա. Խաչատրյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,
Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Ա. Մաշինյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՆՏ Ազգային ժողովի
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ Ազգային ժողովի նախագահի խորհրդական
Դ. Մելքոնյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդ-
վածի 1-ին կերի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կերի, «Սահմանադրական դատա-
րանի մասին» ՆՏ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՆՏ մարդու իրավունքների
պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Նայրենական մեծ պարերագմի վերերանների
մասին» ՆՏ օրենքի 1-ին եւ 4-րդ հոդվածների, ՆՏ կառավարության 2004 թվականի
փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշման՝ Նայասրանի Նանրապետության Սահմանա-
դրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՆՏ մարդու իրավունքների պաշտպանի՝ 13.01.2011թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հեղափոխելով «Նայրենական մեծ պատերազմի վերերանների մասին» ՆՏ օրենքը, ՆՏ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշումը, ՆՏ օրենսդրության այլ ակտեր, ինչպես նաեւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Նայրենական մեծ պատերազմի վերերանների մասին» Նայասրանի Նանրապետության օրենքն ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի դեկտեմբերի 2-ին, Նայասրանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի դեկտեմբերի 30-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

«Նայրենական մեծ պատերազմի վերերանների մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի՝ սույն գործով վիճարկվող 1-ին եւ 4-րդ հոդվածները համապատասխանաբար սահմանում են.

«Նոդված 1. Նայրենական մեծ պատերազմի վերերաններ հասկացությունը

Սույն օրենքով՝ Նայրենական մեծ պատերազմի վերերաններ (այսուհետ՝ վերերաններ) են Նայասրանի Նանրապետության այն քաղաքացիներն ու Նայասրանի Նանրապետությունում մշտապես բնակվող այն անձինք, ովքեր մասնակցել են Նայրենական մեծ պատերազմին, ինչպես նաեւ պատերազմի փարիներին Լենինգրադի բլոկադայի մասնակիցները եւ ֆաշիստական համակենտրոնացման ճամբարների նախկին անչափահաս զերիները: Նայասրանի Նանրապետությունում ժամանակավորապես բնակվող կամ գտնվող Նայրենական մեծ պատերազմին մասնակցած օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակը սահմանվում է Նայասրանի Նանրապետության միջազգային պայմանագրերով:

Նոդված 4. Վերերանների սոցիալական պաշտպանվածության իրավունքը

Վերերանների սոցիալական պաշտպանվածությունն իրականացվում է սույն օրենքով եւ իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

Վերերաններն իրավունք ունեն պետական պարվերի շրջանակներում սրանալ անվճար բժշկական օգնություն եւ բժշկական սպասարկում, ինչպես նաեւ արտոնյալ

պայմաններով սրանալ առողջարանային բուժման ուղեգրեր՝ զինձառայողների համար օրենքով սահմանված կարգով:

Վերերաններին էլեկտրաէներգիայից եւ փրանսպորտից օգտվելու նպատակով, իսկ հաշմանդամ վերերաններին՝ նաեւ գազի, ջրամատակարարման, ջրահեռացման եւ ջերմամատակարարման վարձերը վճարելու համար փրվում է ամենամսյա դրամական օգնություն՝ Նայասրանի Նանրապետության կառավարության սահմանած կարգով եւ չափով:

Նաշմանդամ վերերաններն իրավունք ունեն նաեւ՝

ա) («ա» կետն ուժը կորցրել է 29.11.06 ՎՕ-224-Ն օրենքով).

բ) 50 փոկոս գեղջով վճարել բնակարանի, աղբահանության, հեռախոսի եւ ռադիոյի վարձերը.

գ) սրանալ անվճար պրոթեզավորում եւ վերականգնողական պարագաներ՝ Նայասրանի Նանրապետության կառավարության սահմանած կարգով:

Վերերանն սրանում է ամենամսյա պատվովճար՝ Նայասրանի Նանրապետության կառավարության սահմանած կարգով:

Պատվովճարի գումարը հարկման ենթակա չէ եւ չի հաշվառվում վերերանների կամ նրանց ընտանիքների սոցիալական կարիքավորության աստիճանը որոշելիս:

Սույն հոդվածով սահմանված արտոնությունների իրականացման ծախսերը ֆինանսավորվում են Նայասրանի Նանրապետության պետական բյուջեի, ինչպես նաեւ Նայասրանի Նանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին»:

Նայասրանի Նանրապետության կառավարության թիվ 207-Ն որոշումն ընդունվել է 2004թ. փետրվարի 5-ին, Նայասրանի Նանրապետության Նախագահի կողմից վավերացվել է 2004թ. մարտի 2-ին: Այդ որոշումը սահմանում է Նայրենական մեծ պատերազմի վերերաններին, նրանց հավասարեցված անձանց եւ գոհվածների ընտանիքներին դրամական օգնության նշանակման եւ վճարման կարգը:

ՆՏ կառավարության 2011թ. մայիսի 5-ի թիվ 672-Ն որոշմամբ թիվ 207-Ն որոշումն ուժը կորցրած է ճանաչվել: Միաժամանակ, ՆՏ կառավարությունը 2011թ. մայիսի 5-ին ընդունված «Զինձառայողներին եւ նրանց ընտանիքների անդամներին փրվող ամենամսյա դրամական օգնության չափերը՝ ըստ դրամական օգնություն սրանալու իրավունք ունեցող անձանց կատեգորիաների, դրամական օգնություն նշանակելու եւ վճարելու կարգը սահմանելու մասին» թիվ 668-Ն որոշմամբ վերակարգավորել է Նայ-

րենական մեծ պատերազմի վերերաններին, նրանց հավասարեցված անձանց եւ գոհվածների ընդհանրություններին դրամական օգնության նշանակման եւ վճարման կարգի հետ կապված հարաբերությունները՝ այդպիսի օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց ցանկում ընդգրկելով նաեւ «Նայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների փարաժքներում մարտական գործողությունների մասնակիցների, գոհված զինձառայողների ընդհանրությունների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» ԱՊՏ շրջանակներում կնքված համաձայնագրով նախատեսված այլ կարեգործիայի անձանց:

2. Դիմող կողմը վիճարկվող դրույթների սահմանադրականության վերաբերյալ ներկայացնելով փաստարկներ՝ գտնում է, որ ՏՏ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Նայաստանի Նանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները: Նայաստանի Նանրապետության կողմից վավերացված՝ «Նայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների փարաժքներում մարտական գործողությունների մասնակիցների, գոհված զինձառայողների ընդհանրությունների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994թ. ԱՊՏ համաձայնագրի գործողությունը փարաժվում է քաղաքացիական եւ Նայրենական մեծ պատերազմների հաշմանդամների ու մասնակիցների, այլ պետությունների փարաժքներում մարտական գործողությունների մասնակիցների, գոհված զինձառայողների ընդհանրությունների եւ անձանց այն դասերի վրա, որոնց, համաձայն նշված համաձայնագրին կից 1-ին հավելվածի, փրամադրված են արտոնություններ նախկին ԽՍՀՄ օրենսդրությամբ: Այսպիսով, ինչպես եզրակացնում է դիմող կողմը, «Նայրենական մեծ պատերազմի վերերանների մասին» ՏՏ օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված արտոնությունները չպետք է պակաս լինեն նշված համաձայնագրին կից 2-րդ հավելվածով սահմանված արտոնությունների եւ երաշխիքների ծավալից:

Միաժամանակ, ըստ դիմող կողմի, վերոհիշյալ համաձայնագրի համակարգային վերլուծությունից բխում է, որ սահմանված արտոնությունների մեծ մասի կիրառման ապահովման համար պահանջվում է ներպետական մակարդակով համապատասխան իրավական ակտի ընդունում՝ արտոնության կիրառման կարգի նախատեսմամբ:

Բացի դրանից, համաձայնագրին կից 2-րդ հավելվածով սահմանված են մի շարք արտոնություններ, որոնք ընդհանրապես տեղ չեն գտել ՏՏ օրենսդրության մեջ կամ իրավահավասարության սկզբունքի խախտմամբ առանձին սոցիալական խմբերի համար սահմանվել են մասնակիորեն՝ հակասելով համաձայնագրի պահանջներին: Ըստ դիմող կողմի՝ համապատասխան արտոնություններ սահմանող նորմատիվ դրույթները հակասում են ՏՏ կողմից սպանձնված միջազգային պարտավորություններին՝ նաև արտոնությունների բովանդակության համապատասխանության փաստակցունից:

Դիմող կողմը գտնում է նաև, որ համաձայնագրի կիրառման բնագավառում առկա են նաև բազմաթիվ օրենսդրական բացեր եւ հակասություններ, մասնավորապես, 1994թ. ԱՊՏ համաձայնագրի 1-ին հավելվածով թվարկված բազմաթիվ դասերի անձինք, այդ թվում՝ 1994թ. ԱՊՏ համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետում նշվածները, չեն ներառվել «Նայրենական մեծ պատերազմի վերերանների մասին» ՏՏ օրենքի 1-ին հոդվածում, ինչպես նաև ՏՏ կառավարության 2004թ. փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշմամբ Նայրենական մեծ պատերազմի վերերաններին հավասարեցված անձանց ցանկում: Միևնույն ժամանակ, նշված անձինք իրավակիրառական պրակտիկայում դիտվում են որպես պատերազմի վերերաններին կամ հաշմանդամ վերերաններին հավասարեցված անձինք եւ օգտվում են ՏՏ օրենսդրությամբ վերջիններիս համար սահմանված արտոնություններից (բացառությամբ ամենամյա պարվովճարի, որն օրենքով նախատեսված է միայն Նայրենական մեծ պատերազմին մասնակցած անձանց համար):

3. Պատասխանող կողմ ներգրավված ՏՏ Ազգային ժողովի դիրքորոշման համաձայն՝ «Նայրենական մեծ պատերազմի վերերանների մասին» ՏՏ օրենքի վիճարկվող 4-րդ հոդվածում առկա իրավակարգավորումը չի կարող հակասել ՏՏ Սահմանադրության 14.1-րդ հոդվածում ամրագրված՝ օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքին, քանի որ «օրենքի առջև հավասարության սահմանադրական սկզբունքն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն իբրև զույր ձեւական հավասարություն, այլ իբրև իրավունքների ու ազատությունների օրենսդրական կարգավորման գնահատման սահմանադրական չափանիշ եւ, այս առումով, չպետք է բացառել այդ սկզբունքի կիրառման փարբեր դրսևորումների հնարավորություն, երբ ձեւական հավասարության հաստատումը կարող է հանգեցնել նյութական անհավասարության: Մասնավորապես, փնտեսական եւ սոցիալական իրավունքների ու ազատությունների ձեւական հա-

վասարության դեպքում որոշակի կարեգործիայի սուբյեկտներ կարող են հայտնվել անհավասար կարգավիճակում...: Իրավահավասարության սկզբունքի խախտում կհամարվեր, երբ միեւնույն կարգավիճակն ունեցող անձը ՆՏ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի 2-րդ մասում նշված որևէ հիմքով գրկվեր արտոնությունից կամ առավելությունից: Մինչդեռ օրենքը առանց որևէ բացառության միեւնույն կարեգործիայի անձանց համար սահմանում է հավասար արտոնություններ եւ առավելություններ»:

Ըստ պարասխանող կողմի՝ ՆՏ Ազգային ժողովի, վերոհիշյալ օրենքի վիճարկվող դրույթը չի հակասում նաեւ ՆՏ Սահմանադրության 37-րդ հոդվածով ամրագրված յուրաքանչյուրի՝ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու, գործազրկության եւ օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունքին, քանի որ «տվյալ դեպքում օրենքով սահմանվել են արտոնություններ եւ առավելություններ որոշակի կարեգործիայի անձանց նկատմամբ: Ընդ որում, օրենքում նշված կարեգործիայի անձանց սոցիալական ապահովության իրավունքի իրականացման եղանակներն ու մեխանիզմները նախատեսված են այլ օրենքներով...»: Ըստ ՆՏ Ազգային ժողովի դիրքորոշման՝ «Նայրենական մեծ պարերազմի վերերանների մասին» ՆՏ օրենքի վիճարկվող դրույթները չեն կարող հակասել ՆՏ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասին, քանզի օրենքի վիճարկվող դրույթի պարագայում իրավունքների սահմանափակման թույլատրելի կամ ոչ թույլատրելի շրջանակների մասին խոսել չի կարելի, քանի որ տվյալ պարագայում առկա է ոչ թե երաշխավորված իրավունք եւ դրա սահմանափակում, որը պետք է համապարասխանի սահմանափակման միջազգայնորեն սահմանված շրջանակներին, այլ առկա է որոշակի կարեգործիայի անձանց համար օրենքով սահմանված արտոնություն:

Ըստ պարասխանող կողմ ներգրավված ՆՏ կառավարության դիրքորոշման՝ «Նայրենական մեծ պարերազմի վերերանների մասին» ՆՏ օրենքի եւ ՆՏ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշման վիճարկվող դրույթները չեն հակասում ՆՏ Սահմանադրության 14.1-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածներին եւ 43-րդ հոդվածի 2-րդ մասին, քանի որ «ՆՏ կառավարության համապարասխան որոշմամբ սահմանվել են որոշակի արտոնություններ հավասարապես բոլոր նրանց համար, ովքեր ունեն հաշմանդամ վերերանների եւ նրանց հավասարեցված անձանց կարգավիճակ», եւ որ ՆՏ Սահմանադրության 37-րդ հոդվածն իր ամբողջական արտացոլումն է գտել վերոհիշյալ իրավական ակտերում: ՆՏ Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասին վիճարկվող դրույթների անհամապարասխանության վերաբերյալ ՆՏ կառավարությունը գտնում է, որ իրավական այդ ակտերով սահմանվում են ոչ թե սահմանա-

փակումներ, այլ փրամադրվում են արտոնություններ որոշակի կատեգորիայի անձանց համար, եւ այդպիսիք չեն կարող դիտարկվել որպէս հիմնական իրավունքների եւ ազատությունների սահմանափակումներ:

4. Սույն գործի բնության շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականությունը գնահատելիս հիմք ընդունել.

- ՏՏ միջազգային պայմանագրերի իրավաբանական ուժի եւ դրանցում ամրագրված նորմերի կիրառելիության սահմանադրական իրավակարգավորման բովանդակությունը,

- միջազգային պայմանագրերով եւ օրենքներով սահմանված՝ մարդու եւ քաղաքացու այլ իրավունքների ու ազատությունների երաշխավորման անհրաժեշտության սահմանադրական սկզբունքը,

- անձանց իրավունքները (այդ թվում՝ արտոնությունները) իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը բացառապէս օրենքով սահմանելու վերաբերյալ ՏՏ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի պահանջը,

- մինչեւ սահմանադրական դատարանում գործի դատաքննությունը կամ դրա ընթացքում վիճարկվող իրավական ակտի կամ դրա դրույթի վերացման կամ ուժը կորցնելու իրավական հետեւանքների վերաբերյալ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 60-րդ հոդվածի պահանջը:

Սույն գործի առարկայի շրջանակներում վերերանների սոցիալական պաշտպանության հետ կապված հարաբերությունների միջազգային իրավական կարգավորումն իրականացվում է «Նայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների փարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինճառայողների ընդհանրիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՏ շրջանակներում կնքված համաձայնագրով, որը Նայասպանի Նանրապետության համար ուժի մեջ է մտել 1996 թվականի փետրվարի 26-ից: Այդ համաձայնագրի, «Նայրենական մեծ պատերազմի վերերանների մասին» ՏՏ օրենքի եւ դրանց կատարումն ապահովելու կոչված՝ սույն գործով վիճարկվող ՏՏ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշման, ինչպէս նաեւ սոցիալական ապահովության բնագավառի ՏՏ օրենսդրության այլ ակտերի համադրված վերլուծությունը վկայում է, որ, մասնավորապէս՝ հիշյալ համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետով նախատեսված

անձինք, որոնց համար վերոնշյալ միջազգային համաձայնագրի համաձայն (2-րդ հոդված) պետք է նախատեսվեն արտոնություններ, դուրս են մնացել այդպիսի իրավակարգավորման շրջանակից: ՆՏ օրենսդրությունը նաև մասնակիորեն է անդրադարձել վերոհիշյալ համաձայնագրով նախատեսված արտոնությունների ողջ ծավալին:

5. ՆՏ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն միջազգային պայմանագրերը Նայասպանի Նանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Սահմանադրաիրավական այդ նորմի բովանդակությունից հետևում է, որ ՆՏ միջազգային պայմանագրերը նորմալիվ իրավական ակտեր են, որոնք ՆՏ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, այսինքն՝ բովանդակում են իրավակարգավորման համապատասխան բնագավառի սուբյեկտների համար վարքագծի պարտադիր կանոններ, ունեն ՆՏ օրենքներից եւ իրավական այլ ակտերից առավել բարձր իրավաբանական ուժ, ենթակա են պարտադիր կատարման ՆՏ պետական եւ փոխարինական ինքնակառավարման բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից ՆՏ ողջ տարածքում:

Օրենքի նկատմամբ ՆՏ միջազգային պայմանագրերի գերակայության սահմանադրական սկզբունքն ամրագրված է ՆՏ գործող օրենսդրության բազմաթիվ ակտերում, այդ թվում՝ նաև «Նայրենական մեծ պատերազմի վերերանների մասին» ՆՏ օրենքի 3-րդ հոդվածում, որն ուղղակիորեն սահմանել է, որ «**Եթե ՆՏ միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսվում են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը**»:

ՆՏ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն բացառապես ՆՏ օրենքներով են սահմանվում անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ նորմալիվ դրույթի բովանդակությունից ոչ միայն բխում է անձանց իրավունքների իրացման ու պաշտպանության հետ կապված հարաբերությունները հարկապես օրենքով կարգավորելու, այլև այդ հարաբերությունները լիարժեք եւ, առաջին հերթին՝ **իրավունքի սկզբունքներին համապատասխան կարգավորելու** սահմանադրաիրավական պահանջ:

ՆՏ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները

չեն բացառում օրենքներով եւ միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ եւ ազատություններ: ՆՏ Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն հիշյալ իրավակարգավորումը սահմանափակման ենթակա չէ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդպիսի իրավունքներից եւ ազատություններից (այդ թվում՝ արտոնություններից) օգտվելը նույնպես անձի իրավունք է, որը ենթակա է երաշխավորման ու պաշտպանության ներպետական օրենսդրությամբ: **Միաժամանակ, օրենքով եւ իրավական այլ ակտերով չեն կարող բացառվել միջազգային որևէ պայմանագրով նախատեսված իրավունքներ ու ազատություններ (այդ թվում՝ արտոնություններ) կամ սահմանափակվել այդպիսիք:**

ՆՏ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման եւ իրավակիրառական պրակտիկայում դրանց միակերպ ընկալումն ապահովելու անհրաժեշտության հետ միաժամանակ, սահմանադրական դատարանը կարելուորում է նաեւ Սահմանադրության նորմերի անմիջական գործողության վերաբերյալ ՆՏ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի սկզբունքային պահանջը եւ դրա անվերապահ կատարման անհրաժեշտությունը:

6. Անդրադառնալով «Նայրենական մեծ պատերազմի վեպերանների մասին» ՆՏ օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականության խնդրին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրի խնդիրն է Նայասպանի Նանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում օրենքով նախատեսել անհրաժեշտ իրավակարգավորումներ՝ ապահովելու համար այդ պարտավորությունների կատարումը միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին, հետեւաբար՝ նաեւ ՆՏ Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված սկզբունքին համապատասխան, որոնք միտված լինեն ոչ միայն պետությունների հետ բարիդրացիական եւ փոխշահավետ հարաբերություններ հաստատելու, այլեւ անձանց իրավունքները երաշխավորված պաշտպանելու նպատակին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Նայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդանների, այլ պետությունների փարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, գոհված զինձառայողների ընդհանրության արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՆ շրջանակներում կնքված **համաձայնագրի դրույթների ոչ լիարժեք իրացումը պայմանավորված է ոչ թե վերոհիշյալ օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականությամբ:**

յան խնդրով, այլ իրավակիրառական պրակտիկայում այդ նույն օրենքի 3-րդ հոդվածի նորմարիվ պահանջի անտեսմամբ:

ՆՏ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-668 որոշմամբ (5-րդ կետ) արձանագրել է, որ «Նայրենական մեծ պատերազմի վերերանների մասին» ՆՏ օրենքը սահմանելով «Նայրենական մեծ պատերազմի վերերաններ» հասկացությունը, չի անդրադարձել համաձայնագրի թիվ 1 հավելվածի 2.3. կետում նշված անձանց, եւ որ իրավակիրառական պրակտիկայում «պատերազմի վերերաններ» հասկացությունը մեկնաբանելիս՝ անվերապահորեն պետք է հիմք ընդունել նաեւ համաձայնագրի թիվ 1 հավելվածի 2.3. կետի դրույթները: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ինչպես վկայում է իրավակիրառական պրակտիկան, ՄԴՈ-668 որոշման հիշյալ պահանջը չի իրացվել: Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառական պրակտիկայում հիշյալ օրենքի 3-րդ հոդվածի նորմարիվ պահանջը պետք է հաշվի առնվի ոչ միայն «պատերազմի վերերաններ» հասկացության, այլեւ անձանց նկատմամբ համաձայնագրով նախատեսված արտոնությունները լրիվ ծավալով կիրառելու առնչությամբ: Անդրադառնալով պարասխանող կողմի (ՆՏ կառավարություն) հայտնած այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ «ՆՏ Սահմանադրական դատարանի 28.11.2006թ. թիվ ՄԴՈ-668 որոշման 5-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները նորից հաշվի առնելու անհրաժեշտություն չկա», սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, վերահաստատելով ՄԴՈ-943 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, իրավակիրառական պրակտիկան պարտավոր է հաշվի առնել իրավական ակտերի (դրանց առանձին դրույթների) սահմանադրաիրավական բովանդակության վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտված իրավական դիրքորոշումները: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այլ պրակտիկայի ձեւավորումը կհակասի ՆՏ Սահմանադրությամբ ամրագրված՝ սահմանադրական կարգի հիմնարար սկզբունքներին:

7. ՆՏ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՆՏ կառավարությունն ընդունում է որոշումներ՝ ապահովելու համար նաեւ միջազգային պայմանագրերի եւ օրենքների կատարումը Նայասրանի Նանրապետության ամբողջ տարածքում:

ՆՏ կառավարության սահմանադրական պարտականությունն է իր որոշմամբ սահմանել «Նայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների տարածքներում մարտական գործողությունների մասնակիցների,

գոհված զինձառայողների ընդհանրության արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱԳՏ շրջանակներում կնքված համաձայնագրի, ինչպես նաեւ «Նայրենական մեծ պատերազմի վերերանների մասին» ՏՏ օրենքի դրույթների կատարման կարգն ու պայմանները՝ այնպիսի ծավալով ու բովանդակությամբ, ինչպիսին անմիջականորեն բխում է այդ ակտերից եւ Սահմանադրությամբ ու օրենքներով իրեն վերապահված լիազորություններից՝ հաշվի առնելով նաեւ սահմանադրական դատարանի ՄԴՈ-668 որոշման 5-րդ կետում արտահայտված դիրքորոշումը:

Վերոհիշյալ համաձայնագրի եւ օրենքի, ինչպես նաեւ Նայրենական մեծ պատերազմի վերերանների սոցիալական ապահովության հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրության այլ ակտերի դրույթների համադրված վերլուծությունը վկայում է, որ 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշմամբ ՏՏ կառավարությունը լիարժեք պայմաններ չի նախատեսել Նայրենական մեծ պատերազմի վերերանների, նրանց հավասարեցված անձանց, գոհված զինձառայողների ընդհանրության՝ ՏՏ միջազգային պայմանագրով եւ «Նայրենական մեծ պատերազմի վերերանների մասին» ՏՏ օրենքով սահմանված արտոնությունների եւ երաշխիքների ամբողջական իրացումն ապահովելու համար: ՏՏ կառավարությունը չի անդրադարձել նաեւ ՏՏ սահմանադրական դատարանի ՄԴՈ-668 որոշման կատարման ապահովմանը: Մասնավորապես՝ կառավարության հիշյալ որոշման իրավակարգավորման շրջանակներից դուրս են թողնվել ՏՏ միջազգային համաձայնագրով պատերազմի հաշմանդամ համարվող որոշակի թվով անձինք (հիշյալ համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետ), որոնք նախկինում օգտվել են պատերազմի հաշմանդամների համար նախատեսված արտոնություններից: ՏՏ կառավարության 05.02.2004թ. թիվ 207-Ն որոշմամբ նախկին որոշումները ուժը կորցրած ճանաչելով եւ հիշյալ անձանց համար դրամական փոխհատուցում չնախատեսելով՝ րեդի է ունեցել նրանց՝ ՏՏ միջազգային պարտավորություններով նախատեսված իրավունքի արգելափակում: Ընդ որում, ՏՏ դատական պրակտիկան նույնպես փաստել է, որ պատերազմի հաշմանդամ ճանաչելու վերաբերյալ քաղաքացիների պահանջը հստակ իր լուծումն է ստացել «Նայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների փարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, գոհված զինձառայողների ընդհանրության արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱԳՏ շրջանակներում կնքված համաձայնագրում, սակայն հենվելով ՏՏ կառավարության՝ սույն գործով վեճի առարկա որոշման վրա՝ չի բավա-

րարվել քաղաքացիների հայցադիմումը՝ իրենց արտոնությունները պահպանելու կամ դրամական փոխհատուցում փախու հարցով:

ՏՏ սահմանադրական դատարանը հիմնավոր է համարում դիմող կողմի դիրքորոշումը՝ ՏՏ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշման սահմանադրականության վերաբերյալ, գրնելով, որ, ղեկավարվելով ՏՏ Սահմանադրության 6-րդ (1-ին և 4-րդ մասեր), 42-րդ (1-ին մաս), 44-րդ, 85-րդ (2-րդ մաս) հոդվածներով, ինչպես նաև «Նայրենական մեծ պատերազմի վերերանների մասին» ՏՏ օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով, ՏՏ կառավարությունը պարտավոր էր իր որոշմամբ ապահովել Նայրենական մեծ պատերազմի վերերանների և նրանց հավասարեցված անձանց սոցիալ-տնտեսական արտոնությունների գործողությունը կամ դրանց դրամական փոխհատուցումը՝ նաև այն կարեգորհայի անձանց համար, որը նախատեսված է հիշյալ համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետում:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում այն հանգամանքը, որ ՏՏ կառավարությունն իր՝ 2011թ. մայիսի 5-ի թիվ 672-Ն որոշմամբ սույն գործով վիճարկվող թիվ 207-Ն որոշումն ուժը կորցրած է ճանաչել: Իր՝ 2011թ. մայիսի 5-ին ընդունված «Զինձառայողներին և նրանց ընտանիքների անդամներին փրկող ամենամյա դրամական օգնության չափերը՝ ըստ դրամական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց կարեգորհաների, դրամական օգնություն նշանակելու և վճարելու կարգը սահմանելու մասին» թիվ 668-Ն որոշմամբ ՏՏ կառավարությունը վերակարգավորել է Նայրենական մեծ պատերազմի վերերաններին, նրանց հավասարեցված անձանց և զոհվածների ընտանիքներին դրամական օգնության նշանակման և վճարման կարգի հետ կապված՝ 2011 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունները: Նման օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց ցանկում ընդգրկվել են նաև «Նայրենական մեծ պատերազմի մասնակիցների և հաշմանդամների, այլ պետությունների փարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինձառայողների ընտանիքների արտոնությունների և երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» ԱԳՏ շրջանակներում կնքված համաձայնագրով նախատեսված անձանց:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրեն-

քի 60-րդ հոդվածի 2-րդ կետով, 63-րդ, 64-րդ եւ 68-րդ հոդվածներով, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. «Նայրենական մեծ պատերազմի վերերանների մասին» ՆՏ օրենքի 1-ին եւ 4-րդ հոդվածները համապատասխանում են Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածին (2-րդ մաս), 85-րդ հոդվածին (2-րդ մաս), 43-րդ հոդվածին (2-րդ մաս) հակասող ճանաչել ՆՏ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշումը՝ «Նայրենական մեծ պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների փարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընթանիքների արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱՊՆ շրջանակներում կնքված եւ Նայասրանի Նանրապետության համար 1996 թվականի փետրվարի 26-ից ուժի մեջ մտած համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետում նշված անձանց իրավունքների իրացման կարգ չնախատեսելու եւ այդ իրավունքներն արգելափակելու մասով՝ հաշվի առնելով սույն որոշման պարճառաբանական մասի 6-րդ եւ 7-րդ կետերում արտահայտված իրավական դիրքորոշումները եւ ի գիտություն ընդունելով ՆՏ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 668-Ն որոշումը:

3. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

3 հունիսի 2011 թվականի
ՍԴՈ-966